# Թթ









| | | | | |
|---|---|---|---|---|
| թագ | թութ | թոք | թել | թութակ |
| թագավոր | թթենի | թոնիր | թերթ | թիթեռ |

## ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹԸ

Վաղո՜ւց, շատ վաղուց էր դա: Թշնամին, իմանալով, որ մեր թագավոր Մհերը մահացել է, զորք է հավաքում ու գալիս գրավում է մեր երկիրը՝ Հայաստանը:

Թիվ կար երկնքի աստղերին, թիվ չկար թշնամու զորքին: Մհերի որդին՝ պատանի Դավիթը, վերցնում է իր զենք ու զրահը ու գնում թշնամու դեմ: Նա կռվում ու հաղթում է թշնամուն:

Դու քեզ մի՛ գովիր, թող ուրի՛շը գովի:

Թութա՛կ, ասա՝ կա թու՞թ:
Թութա՛կ, ասա՝ կաթ, ու՞թ:

թութ
թաթ
թակ - կաթ